



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՕՄ-Ի ՆՈՐԸՆՏԻՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան երեքշաբթի, 9 Օգոստոսի յետմիջօրէին, Ազգ.

Առաջնորդարանի «Սիւլահեան» դահլիճին մէջ ընդունեց այցելութիւնը ՀՕՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Նորընտիր Շրջանային Վարչութեան կազմին, գլխաւորութեամբ ատենապետուհի Օրդ.

Նայիրի ՏԵՐՍԵՐԵԱՆԻ: Հանդիպումին ներկայ եղաւ Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց հիւր ՀՕՄականները եւ շնորհաւորեց Նորընտիր կազմը, յաջողութիւն մաղթելով անոր աշխատանքներուն:

Հանդիպումին, հիւր վարչականները ընդհանուր գիծերու մէջ Առաջնորդ Սրբազանին ներկայացուցին իրենց ծրագիրները, որոնք չեն սահմանափակուիր միայն Արեւմտեան Միացեալ Նահանգներով, այլ կ'ընդգրկեն նաեւ Հայաստանը, Արցախն ու Ջաւախքը:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց ՀՕՄի ժողովրդանուէր ու հայրենաշէն ծառայութիւնները, ապա նաեւ հիւր վարչականներուն ծանօթութիւններ տուաւ Ազգ. Առաջնորդարանի աշխատանքներուն մասին, որոնք այժմու հանգրուանին մեծ մասամբ կեդրոնացած են Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հովուապետական այցելութեան պատրաստութեան վրայ: Ան վստահութիւն յայտնեց, որ ՀՕՄը եւ մեր շրջանի այլ միութիւնները սերտ գործակցութիւն պիտի ցուցաբերեն Վեհափառ Հայրապետի դիմաւորումին ու այդ առիթով նախատեսուած հանդիսութեանց առիթով: Խորհրդակցութեան սիւթ եղան նաեւ ՀՕՄին ու Ազգ. Առաջնորդարանին միջեւ անանդական գործակցութիւնը աւելի եւս աշխուժացնելու կարելիութիւնները:

PRELATE WELCOMES NEW ARS REGIONAL EXECUTIVE



On Tuesday, August 9th, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the newly elected Regional Executive of the Armenian Relief Society Western Region, headed by Chairlady Ms. Nyree Derderian. Executive Council Chair Mrs. Rima Boghossian also participated in the meeting, which was held at

the "Sulahian" Reception Hall.

The Prelate greeted the members and firstly wished them success in their new responsibilities and endeavors.

The members spoke of their upcoming projects, which encompasses not only the Western United States but also Armenia, Artsakh, and Javakhk. The Prelate highly commended the work of the ARS and its dedicated members.

The Prelate spoke of the Prelacy's upcoming endeavors, specifically the Pontifical Visit of H.H. Catholicos Aram I in October, and expressed certainty that the ARS and sister organizations will collaborate with the Prelacy and participate in the welcoming of and events in honor of His Holiness. Also discussed was expanding the existing collaboration between the Prelacy and the ARS.